ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԵԼՔԸ

Գ. Մ. ԳՈՂԱՄՅԱՆ

Սովետական կարգերի հաղթանակից անմիջապես հետո Հայաստանի հեղկոմը մի շարք դեկրետներ ընդունեց պրոլետարիատի դիկտատուրայի կենտրոնական և տեղական մարմիններ ստեղծելու, հասարակական ու տնտեսական կյանքը նորմալ հունի մեջ դնելու համար։ 1920 թ. դեկտեմբերի 28-ին հեղկոմի դեկրետով ազգայնացվեց հողը[1] (հետագայում հանրապետության սեփականություն հայտարարվեցին նաև հողի ընդերքը, անտառները, ջրերը)։ Նորաստեղծ սովետական իշխանությունը հողազուրկ և սակավահող գյուղացիության անվճար օգտագործման տվեց մոտ մեկ և կես միլիոն հեկտար հող։ Իրականացավ հայ գյուղացու՝ հող ունենալու դարավոր երազանքը։

Սակայն միայն իր ուժերով և միջոցներով Սովետական Հայաստանը չէր կարող դուրս գալ պարենային ճգնաժամից ու սովի ճիրաններից։ Օգնության մեծ կարիք էր զգացվում։ Այդ օգնությունն ստացվեց Սովետական Ռուսաստանից և եղբայրական մյուս հանրապետություններից։ Գյուղատնտեսությունը վերականգնելու և երկիրը ծանր վիճակից դուրս բերելու նպատակով ամեն տարի հարյուր հազարավոր փութ սերմացու և պարենային հացահատիկ էր ստացվում երկրի տարբեր շրջաններից։ 1920 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի ֆինժողկոմատը Հայաստանին տվեց երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (ոսկով՝ 600 հազար)։ Իսկ 1921 թ. ապրիլին Ռուսաստանի Ժողկոմսովետի որոշմամբ բաց թողնվեց մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ[2]։ Նման օգնություն ստացվեց նաև մյուս տարիներին։ Դա հնարավորություն տվեց արագ վերականգնելու քայքայված և ավերված ժողովրդական տնտեսությունը։

Հանրապետության ժողովրդական տնտեսության հետագա զարգացման և առաջին հերթին գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակի վերականգնման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1921 թ. գարնանը ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումը նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) անցնելու մասին։ ՆԷՊ-ը հնարավորություն էր ընձեռում արագ զարգացնելու գյուղատնտեսությունը և ամրապնդելու քաղաքի ու գյուղի տնտեսական կապերը։ Նույն թվականի ապրիլ-հուլիս ամիսներին մեր հանրապետությունում նույնպես որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին այդ ուղղությամբ, իսկ հունիսի 24-ին հրապարակվեց ՀՍՍՀ Ժողկոմսովետի դեկրետը «Պարենտուրքի մասին»։ Պարենհարկը նշանակվում էր ըստ գյուղացիական տնտեսությունների եկամուտների, որի շնորհիվ հիմնական ծանրությունն ընկնում էր ունևորների

---

[1] *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, էջ 448։*

[2] *ՏԵ՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 1։*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ա. ՄՌԱՎՑԱՆ

Ս. ԿԱՍՑԱՆ

Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ա. ԲԵԳԶԱԴՅԱՆ

Ա. ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ

Ի. ԴՈՎԼԱԹՅԱՆ

վրա։ Չքավոր և թույլ տնտեսությունները մասամբ կամ լրիվ չափով ազատվում էին պարենհարկից։ Դա շահագրգռում էր գյուղացիությանը, որպեսզի նա ավելի շատ արտադրի և գյուղատնտեսական մթերքներն աղատ շուկա հանի։ Գյուղացիական մթերքների արտադրության բարձրացման գործում գյուղացիության նյութական շահագրգռվածության բարձրացման շնորհիվ տնտեսությունը սկսեց աստիճանաբար վերելք ապրել։

1921 թ. ամռանը հանրապետության գավառներում ու շրջաններում տեղի ունեցան գյուղացիական համագումարներ, որոնք քննարկում էին նոր տնտեսական քաղաքականության անցնելու հարցերը։ Աշխատավոր գյուղացիությունը միահամուռ հավանություն տալով այդ քաղաքականությանը, խանդավառությամբ պարտավորվում էր ակտիվորեն պայքարել սովետական իշխանության ամրապնդման և քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո, որոշակի աշխատանքներ կատարվեցին ավերված ոռոգման ցանցը վերականգնելու, նոր ջրանցքներ կառուցելու ուղղությամբ։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին (1921—25 թթ.) ավարտվեցին ավելի քան 3200 կմ. ընդհանուր երկարությամբ շուրջ 430 մանր ջրանցքների վերականգնման ու վերակառուցման աշխատանքները[3]։

«Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի ոնցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»,—ղրել է Լենինը 1921 թ. ապրիլին՝ Կովկասի կոմունիստներին ուղղված իր հայտնի նամակում[4]։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ղեկավարվելով Լենինյան ցուցումներով, գլխավորեց աշխատավորության խանդավառ պայքարը և ամենուր աշխատանքներ ծավալվեցին խոշոր և միջին մեծության ջրանցքներ կառուցելու, ոռոգման ցանցն ընդլայնելու ուղղությամբ։ 1925 թ. սկսեց գործել Շիրակի ջրանցքը՝ 21 կմ երկարությամբ։ Դա սովետական իշխանության կառուցած առաջին խոշոր ջրանցքն էր, որը կարևոր դեր խաղաց շաքարի ճակնդեղի մշակությունը հանրապետությունում արմատավորելու գործում։ Առաջին հնգամյակի վերջում կառուցված ջրանցքների ընդհանուր երկարությունն անցնում էր հինգ հարյուր կիլոմետրից, որոնցով ոռոգվում էր 77,5 հազար հեկտոր հող։ Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիներին հանրապետության ոռոգման ցանցի վրա պետության միջոցներից ծախսվել է 15 միլիոն ռուբլուց ավելի, որի շնորհիվ ոռոգվող հողերի տարածությունը հասցվել է 180 հազար հեկտարի։ Ջրաշինարարական աշխատանքները և ոռոգվող հողատարածությունների ընդարձակումը շարունակվում էր նաև պատերազմի ծանր տարիներին և հատկապես լայն թափ ստացավ հետպատերազմյան շրջանում։

Մեծ աշխատանքներ ծավալվեցին նաև Արարատյան հարթավայրի ճահճակալած հողերի չորացման ուղղությամբ։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում չորացվել են ավելի քան 25 հազար հեկտար ճահիճներ և ճահճակալած հողեր։ Կառուցվել են բազմաթիվ ջրհան կայաններ, ջրամբարներ, հորատվել են արտեզյան ջրհորներ և այլն։ 1928—65 թթ. հանրապետության ջրատնտեսական շինարարության մեջ ներդրվել է ավելի քան 80 միլիոն

---

3 Հոկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1967, էջ 412։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

ռուբլի, որից միայն 4,5 միլիոնը՝ կոլտնտեսային միջոցներից։ Այժմ ՀՍՍՀ ոռոգվող հողատարածությունները կազմում են շուրջ 260 հազար հեկտար։

Միաժամանակ որոշակի աշխատանքներ տարվեցին ագրարային ռեֆորմի՝ հողօգտագործման և հողաշինարարության ուղղությամբ, որոնք հիմնականում ավարտվեցին 1927 թ.։ Միջգյուղային և ներքին հողաշինարարության շնորհիվ սեղմ ժամկետում հողազուրկ և սակավահող գյուղացիները, նաև բազմահազար անօթևան գաղթականները բավարարվեցին հողով։ Ագրարային ռեֆորմի կենսագործմամբ վերացվեց հողօգտագործման բնագավառում անցյալից ժառանգած քաոսն ու անարդարությունը, կարգավորվեց Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների (ռուսներ, ադրբեջանցիներ, քրդեր) հողօգտագործման վիճակը։ Հողաշինարարական աշխատանքների ժամանակ խոշոր արտոնություն էր տրվում գյուղացիական ընկերություններին, արտելներին, կոոպերատիվներին։

Սովետական իշխանության ագրարային և ֆինանսական (հարկային ու վարկային) քաղաքականության հետևողական կենսագործմամբ արմատապես փոխվեց աշխատավոր գյուղացիության տնտեսական ու հասարակական վիճակը։ Այսպես, ցանք չունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը 1925 թ. 15,3 տոկոսից 1929 թ. իջել էր 10,7 տոկոսի, իսկ 1,1—4 հեկտար տարածությամբ ցանք ունեցողներինը՝ 4,1-ից բարձրացել էր 48,9 տոկոսի։ Բանող անասուն չունեցողների տեսակարար կշիռը 1924 թ. 55 տոկոսից 1929 թ. իջել էր 35,6 տոկոսի, մինչդեռ 1—2 զույգ լծկան ունեցող տնտեսություններինը՝ 12,2-ից աճել էր 46 տոկոսի[5]։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում խոշոր դեր խաղացին մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ)։ Մինչ այդ գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները կոոպերացիաների միջոցով վաճառվում էին գյուղացիներին։ Սակայն նոր կազմակերպված կոլտնտեսությունները հնարավորություն չունեին սեփական միջոցներով մեքենաներ ձեռք բերել։ Նրանք չէին կարող նաև օգտագործել մեքենաները՝ կադրեր և անհրաժեշտ փորձ չունենալու պատճառով։ Այսպիսի պայմաններում կյանքի կոչվեցին ՄՏ կայանները, որոնք առաջին հերթին սպասարկում էին կոլտնտեսությունների և կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացիներին։ Հայաստանում առաջին ՄՏԿ-ն հիմնվել է Սարդարապատում (այժմ Հոկտեմբերյան) 1930 թ. մարտին։ Առաջին հնգամյակի վերջին (1932 թ.) արդեն կար 7 ՄՏԿ, որոնք սպասարկում էին շրջապատի գյուղերը։ ՄՏ կայանները կարևոր հենակետեր էին պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքում։ Դրանք անգնահատելի դեր խաղացին քաղաքի և գյուղի արտադրական կապերի ուժեղացման, բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման և կոլտնտեսային արտադրության վերելքի գործում։ «Դրանք այն խոշոր քաղաքական ու կազմակերպական ուժն էին, որոնց շուրջը գյուղացիությունը միավորվեց կոլտնտեսությունների մեջ և համոզվեց խոշոր մեքենական տնտեսությունների առավելությունների մեջ»[6]։

Աշխատավոր գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու և գյուղի սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստելու գործում բացառիկ նշանակություն ունեցավ կոոպերացիան, որը պրոլետա-

---

5 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 266։

6 ՍՄԿԿ-ն բանաձևերում..., մաս 3-րդ, էջ 808։

րիատի դիկտատուրայի պայմաններում գյուղացիությանն ավելի մատչելի ու ամենահեշտ ուղին էր սոցիալիզմին անցնելու համար։

Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիան արագ թափով սկսեց զարգանալ 1924 թ. հետո, երբ ձևավորվեց Հայգյուղկոոպը։ Հանրապետության 265 կոոպերատիվներում 1928 թ. ընդգրկված էին ավելի քան 61,5 հազար տնտեսություն, որը գյուղացիական տնտեսությունների 38,5 տոկոսն էր[7]։ Սպառողական և վարկային կոոպերացիաների կողքին հանդես եկան մատակարարման, մթերման ու վաճառահանման և վերջապես, արտադրական կոոպերատիվներ։ 1927 թ. Հայաստանում կար ընդամենը վեց կոլտնտեսություն, որտեղ ընդգրկված էր 390 ընտանիք, 1928 թ.՝ 96 կոլտնտեսություններում ընդգրկված էին 1942 ընտանիք, իսկ 1929 թ. հունվարին կար 110 կոլտնտեսություն 2117 ընտանիքով[8]։ Այդ կոլտնտեսությունները կոչված էին ցուցադրելու սոցիալիստական խոշոր տնտեսությունների առավելությունները մանր գյուղացիական, անհատական տնտեսությունների նկատմամբ։ Դրանց ամրապնդման և օրինակելի տնտեսություն դարձնելու գործում կարևոր դեր խաղաց պետության վարկային քաղաքականությունը։ 1928—29 թթ. ամեն մի կոլտնտեսական ընտանիք տասն անգամ ավելի վարկ ստացավ, քան անհատական տնտեսությունը։ Կարևոր էր նաև կոլտնտեսություններին օգնելու համար մասսայաբար ծավալված շեֆական աշխատանքների դերը։ 1929 թ. վերջերին կոլտնտեսությունների թիվը հասավ 245-ի, որտեղ ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների 3,4 տոկոսը։ Փաստորեն գյուղատնտեսության վերականգնմանը զուգընթաց լուրջ աշխատանք էր տարվում մանր տնտեսությունները կոոպերացիայի մեջ ընդգրկելու և խոշոր տնտեսություններ հիմնելու ուղղությամբ։ Գյուղատնտեսությունն աստիճանաբար փոխագրվում էր զարգացման սոցիալիստական ուղու վրա։ Սոցիալիստական արդյունաբերության բուռն վերելքը հնարավորություն տվեց հանրապետության գյուղատնտեսությունը վերականգնել համեմատաբար նոր տեխնիկական բազայի վրա։ Դա նույնպես հեշտացրեց նրա սոցիալիստական վերակառուցումը։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում խոշոր տեղաշարժեր կատարվեցին առաջին հնգամյակի տարիներին (1928—32 թթ.)։ Հանրայնացված ցանքատարածությունը հասավ շուրջ 160 հազ. հեկտարի, որը կազմում էր ամբողջի 39,2 տոկոսը։ Սոցիալիստական սեկտորում էր կենտրոնացված հացահատիկային կուլտուրաների 34,4 տոկոսը, տեխնիկական կուլտուրաների 68,4 տոոսը և բանջարա-բոստանային կուլտուրաների ու կարտոֆիլի արտադրության 48,3 տոկոսը[9]։

Հնգամյակի տարիներին Հայաստանի գյուղատնտեսության մեջ ներդրվեց 96,6 միլիոն ռուբլի, որից 13,6 միլիոնը հատկացվեց կոլտնտեսային շինարարությանը։ 1932 թ. հունիսի 1-ի տվյալներով, կոլտնտեսությունների թիվը հասնում էր 892-ի, որտեղ ընդգրկված էր 63 հազարից ավելի գյուղական տնտեսություն, կամ բոլոր տնտեսությունների 37,5 տոկոսը։ Սա խոշոր նվաճում էր։ Աշխատավոր գյուղացիությունը բռնեց զարգացման սոցիալիստական ուղին։ Կոլտնտեսային շարժումը թևակոխեց նոր փուլ։

---

7 Հայգյուղկոոպի գործունեության հաշվետվություն, Երևան, 1928, էջ 19։

8 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 4, թ. 328։

9 Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935, էջ 35, էջ 136։

Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը հիմնականում ավարտվեց երկրորդ հնգամյակի տարիներին։ 1937 թ. արդեն կային 1074 կոլտնտեսություն և 16 սովխոզ, որոնց մեջ ընդգրկված էին գյուղացիական տնտեսությունների 88,7 և ցանքատարածությունների՝ 92,6 տոկոսը[10]։

Այսպիսով, լենինյան կոոպերատիվ պլանի հետևողական կենսագործմամբ և բանվոր դասակարգի եղբայրական օգնության շնորհիվ, գյուղացիությունն աստիճանաբար համոզվեց սոցիալիստական խոշոր տնտեսությունների շահավետության մեջ և իր բախտն անվերադարձ կերպով կապեց սոցիալիզմի հետ։ «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության,— գրված է ՍՄԿԿ Ծրագրում,— մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ։ ...Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[11]։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը և այդ բազայի վրա կուլակության՝ որպես դասակարգի վերացումը, գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ամրապնդումը վճռական նախապայմաններ հանդիսացան սոցիալիստական նոր գյուղացիության ձևավորման համար։ Դրա հաստատումը եղավ Հայաստանի հարվածային կոլտնտեսականների հանրապետական առաջին համագումարը (1933 թ. հունիս), որն արձանագրեց մանր սեփականատիրական կապանքներից ազատագրված նոր գյուղացիության սոցիալիստական դիրքորոշումը։ Շուտով՝ 1935 թ. գումարված ՍՍՀՄ հարվածային կոլտնտեսականների երկրորդ համագումարն ընդունեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, որը կարևոր նշանակություն ունեցավ կոլտնտեսություններն ամրապնդելու գործում։

Երկրորդ հնգամյակի տարիներին զգալիորեն ամրապնդվեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազան։ Այդ խնդրում վճռական դերը պատկանում էր ՄՏ կայաններին։ 1937 թ. հանրապետությունում գործում էր 24 ՄՏԿ, որոնք սպասարկում էին կոլտնտեսային ցանքատարածությունների 73,2 տոկոսը։ Գյուղատնտեսական արտադրությունը գիտականորեն կազմակերպելու և աշխատավորության նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու շնորհիվ հնգամյակի տարիներին զգալիորեն բարձրացավ կոլտնտեսություններում մշակվող հիմնական կուլտուրաների բերքատվությունը՝ հացահատիկինը՝ 65 տոկոսով, բամբակինը՝ 4,5 անգամ, ծխախոտինը՝ 1,4 անգամ, խաղողինը՝ 1,2 անգամ, կարտոֆիլինը՝ 1,9 անգամ և այլն։

Գյուղատնտեսական արտադրության բարձրացման շնորհիվ կոլտնտեսությունների հիմնական միջոցները 46 միլիոն ռուբլուց հասան 231 միլիոնի, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 60,8 միլիոն ռուբլուց՝ 99,1 միլիոնի[12]։ Զգալիորեն բարձրացավ կոլտնտեսականների նյութական բարեկեցության մակարդակը, փոխվեց գյուղացիության սոցիալական դեմքը, աճեց նրա հասարակական ու քաղաքական ակտիվությունը։ Ձևավորվեց նոր տիպի գյուղացիություն։

---

10 Советская Армения за 40 лет, Ереван, 1960, էջ 70։

11 ՍՄԿԿ ծրագիրը և կանոնադրությունը, Երևան, 1964, էջ 17։

12 Социалистическое строительство Армянской ССР, էջ 44։

Կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպական ամրապնդմանն էին ուղղված կուսակցության և սովետական կառավարության միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին երրորդ հնգամյակի տարիներին։ Միայն 1938—41 թթ. Հայաստանի գյուղատնտեսության մեջ ներդրվեց շուրջ 350 միլիոն ռուբլի։ Գյուղատնտեսության աշխատողների ուշադրությունը հրավիրվեց, առաջին հերթին, այգեգործության և անասնաբուծության զարգացման վրա։

Դեռևս նախապատերազմյան տարիներին սկսվեց գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը։ 1940 թ. արդեն գործում էր 21 գյուղական էլեկտրակայան, էլեկտրիֆիկացված էր 151 կոլտնտեսություն։ Սակայն գա այդ ուղղությամբ կատարվող միայն առաջին քայլերն էին, որոնք լայն ծավալ ստացան և հասցրին գյուղի համատարած էլեկտրիֆիկացմանը հետպատերազմյան տարիներին։

Նախապատերազմյան տարիներին Հանրապետության սոցիալիստական գյուղատնտեսության ձեռք բերած նվաճումների մասին է ասում այն, որ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին 1940 թ. Հայաստանից մասնակցեցին 407 կոլտնտեսություն, 6 սովխոզ, 2 ՄՏԿ, 107 անասնապահական ֆերմա և շուրջ 4 հազար արտադրության առաջավորներ։ Բարձր բերքատվության հասնելու համար Լենինի շքանշանով պարգևատրվեց Էջմիածնի շրջկենտրոնի «Անաստված» կոլտնտեսությունը և Աշխատանքային կարմիր գրոշի շքանշանով՝ Արտաշատի շրջանի Փարիզի կոմունայի անվան կոլտնտեսությունը։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գյուղի աշխատավորները պատվով կատարեցին նախապատերազմյան հնգամյակների առաջադրանքները։ 1940 թ. Հայաստանի գյուղատնտեսության 309 առաջավորներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Այսպիսով, նախապատերազմյան հնգամյակների տարիներին արմատական փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանի գյուղատնտեսության մեջ։ Անվերադարձ հաղթանակեց կոլտնտեսային կարգը և հանրային արտադրությունը դարձավ գյուղացիության հոգևոր ու նյութական բարեկեցության բարձրացման հիմքը։

Կոլտնտեսային կարգերի ուժն ու կենսունակությունը փայլուն կերպով դրսևորվեցին Հայրենական պատերազմի տարիներին։ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը պատվով դիմացավ պատերազմի տարիների դժվարություններին և սրբությամբ կատարեց իր հայրենասիրական պարտքը։ «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուն կառուցելու համար կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները մուծեցին 46 միլիոն ռուբլի, իսկ «Սովետական Հայաստան» մարտական էսկադրիլայի համար՝ 21 միլիոն ռուբլի։ Համախմբվելով կոմունիստական կուսակցության շուրջը, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը հայրենասիրական անձնվեր աշխատանքով փառավոր էջեր գրեց սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման պատմության մեջ։

Պատերազմն ավարտվելուց հետո սովետական ժողովուրդը նոր թափով ձեռնամուխ եղավ խաղաղ, ստեղծագործ աշխատանքներին։ Ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանով Հանրապետության գյուղատնտեսության մեջ ներդրվեց 68,8 միլ. ռուբլի։ Նախատեսվում էր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը հասց-

նել նախապատերազմյան մակարդակի 175 տոկոսին։ Հատուկ ուշադրություն դարձվեց այգեգործության և տեխնիկական կուլտուրաների մշակման վրա։

Սոցիալիստական գյուղատնտեսության հետպատերազմյան վերելքին ուղղված միջոցառումների շարքում շատ կարևոր էր կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը. 1940 թ. գոյություն ունեցող 38 ՄԿՏ-ների փոխարեն 1950 թ. հանրապետությունում գործում էին 46, իսկ 1953 թ.՝ 53 ՄՏ և 5 մեքենա-անասնաբուծական կայաններ։ Այդ տարիներին կրկնապատկվեց ՄՏԿ-ների տրակտորների և կոմբայնների քանակը։ Տարեցտարի բարձրանում էր գյուղատնտեսական աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը։ Կոլտնտեսային արտադրության մեջ լայնորեն մուտք էր գործում էլեկտրականությունը. եթե 1948 թ. էլեկտրիֆիկացված էր կոլտնտեսությունների 35,1 տոկոսը, ապա 1952 թ. այն հասավ 76 տոկոսի։ Ներկայումս հանրապետության գյուղերը համատարած էլեկտրիֆիկացված են։

Հետպատերազմյան տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց հանրապետության գյուղատնտեսությունը բարձրորակ կադրերով ապահովելու գործին։ Գյուղատնտեսությունը միջին և բարձր որակի կադրերով ապահովելու նպատակով 1946 թ. սկսած ամեն տարի շուրջ 10 հազար կոլտնտեսականներ իրենց որակավորումն էին բարձրացնում տեղերում կազմակերպած ագրոտեխնիկական խմբակներում։ 1950 թ. այդ խմբակները դարձան եռամյա դասընթացներ, որոնք արտադրության տարբեր ճյուղերի բարձրորակ վարպետներ էին պատրաստում։ 1947 թ. Երևանում բացվեց կոլտնտեսությունների ղեկավար կադրերի պատրաստման երկամյա դպրոց։ Գյուղատնտեսական ինստիտուտին կից սկսեցին գործել ՄՏԿ-ների դիրեկտորների և բաժնի վարիչների վերապատրաստման 6-ամսյա դասընթացներ։ Աստիճանաբար ավելացավ գյուղում աշխատող մասնագետների քանակը։ Այժմ հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատում են 8766 մասնագետներ։

Գյուղատնտեսության հետպատերազմյան զարգացման համար ակտիվ պայքարողների շարքերում էին կոմերիտականներն ու երիտասարդները։ Դեռևս պատերազմի տարիներին ծնունդ էին առել կոմերիտական-երիտասարդական օղակները, որոնց թիվը 1946 թ. հասնում էր 1810-ի։ Այդ օղակներում ընդգրկված շուրջ 26 հազար երիտասարդներ մշակում էին 11500 հեկտարից ավելի ցանքատարածություն։ Լավագույն աշխատանքների համար 28 կոմերիտական-երիտասարդական օղակներ պարգևատրվեցին ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրով։ Իսկ Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի կոմերիտական-երիտասարդական օղակի օղակավար Մարիամ Մարտիրոսյանը 1947 թ. արժանացավ սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման։ Դա հանրապետության կոլտնտեսային դաշտերի առաջին հերոսուհին էր։ Հետագայում լավագույն աշխատանքի համար տասնյակ առաջավորներ արժանացան այդ պատվավոր կոչմանը։

Սակայն գյուղատնտեսության զարգացման տեմպերը դեռևս ցածր էին։ Եթե հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը 1940—1950 թթ. աճել էր 2,6 անգամ, իսկ քաղաքային ազգաբնակչությունը կրկնապատկվել էր, ապա գյուղատնտեսության արտադրանքն ավելացել էր միայն 15 տոկոսով։ Բացահայտ անհամապատասխանություն էր առաջացել սոցիալիստական արդյունաբերության և կոլտնտեսային գյուղատնտեսության զարգացման տեմպերի միջև։ Քննարկելով ՍՍՀՄ գյուղատնտեսության հետագա

զարգացման հարցը, ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1953) և հետագա պլենումները լենինյան համարձակությամբ բացահայտեցին գյուղատնտեսության ղեկավարման բնագավառում տեղ գտած լուրջ սխալներն ու թերությունները և կոնկրետ միջոցառումներ մշակեցին դրանք վերացնելու համար։ Գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումներն ավելացնելու նոր կուրսի շնորհիվ, որ մշակեց սեպտեմբերյան պլենումը, Հայաստանի գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների տարեկան միջին չափը 1921—53 թթ. 7,9 միլիոն ռուբլու դիմաց 1954—59 թթ. կազմեց 27,2 միլիոն ռուբլի։

Սոցիալիստական գյուղատնտեսության վերելքն ապահովելու նպատակով ձեռնարկված արմատական միջոցառումները նպաստեցին կոլտնտեսային գյուղացիության նյութական շահագրգռվածության բարձրացմանը, կոլտնտեսային արտադրության նոր վերելքին, կոլտնտեսությունների եկամուտների ավելացմանը, ապրանքա-դրամային հարաբերությունների ամրապնդմանը։ Աճեց գյուղի աշխատավորության բարեկեցության մակարդակը։ Դրա լավագույն վկան է բնակարանային շինարարության լայն ծավալումը հետպատերազմյան տարիներին։ Եթե նախապատերազմյան հնգամյակներում կոլտնտեսային գյուղերում կառուցվել էր 653 հազար ք.մ. բնակելի տարածություն. ապա 1945—65 թթ. այն հասավ 4423 հազար քառակուսի մետրի[13]։

Արմատական փոփոխության ենթարկվեց գյուղատնտեսության մեքենայական սպասարկման բնույթը։ Հետպատերազմյան տարիներին, սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ ոչ միայն վերականգնվեց, այլև ստեղծվեց միանգամայն նոր որակի տեխնիկական բազա։ Գյուղատնտեսությունը ստացավ հազարավոր նոր մեքենաներ։ Մասնավորապես վերակառուցվեցին ՄՏ կայանները, որոնք ժամանակին մեծ դեր էին խաղացել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրում։ Նպատակահարմար դարձավ ՄՏԿ-ների մեքենաները վաճառել կոլտնտեսություններին։ Հանրապետության կոլտնտեսությունները ձեռք բերեցին 63,9 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ։ Գյուղատնտեսությունն անհրաժեշտ մեքենաներով ապահովելու և նրանց վերանորոգումը կազմակերպելու համար ստեղծվեցին նորոգման-տեխնիկական կայաններ (ՆՏԿ)։ Միայն 1968 թ. հանրապետության գյուղատնտեսությունը ստացել է 1203 տրակտոր, 920 բեռնատար ավտոմեքենա, 295 կոմբայն և բազմաթիվ այլ մեքենաներ։ Այժմ հանրապետության դաշտերում աշխատում են 9503 տրակտոր, 1624 հացահատիկային կոմբայն ու բազմաթիվ այլ մեքենաներ։

Մեծ ուշադրություն դարձվեց նաև կոլտնտեսությունները բարձրորակ կադրերով ապահովելու վրա։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1955 թ. որոշմամբ արտադրության 30 հազար լավագույն կազմակերպիչներ գյուղ ուղարկվեցին մշտական աշխատանքի, ինչպես դա արվել էր դեռևս 1929 թ., երբ կուսակցության կոչով 25 հազար առաջավոր բանվորներ մեկնեցին գյուղ և խոշոր դեր խաղացին գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ 1953—55 թթ. հանրապետության կոլտնտեսություններում որպես նախագահ աշխատելու համար գյուղ ուղարկվեց 500 մարդ։ 1965 թ. 541 կոլտնտեսությունների նախագահներից 389-ը, իսկ սովխոզների դիրեկտորների

---

13 Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, Ереван, 1967, էջ 232։

92,5 տոկոսը ունեին բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն։ Եթե 1959 թ. գյուղատնտեսությանը սպասարկում էին շուրջ 10 հազար մեխանիզատորներ, ապա 1966 թ. նրանց թիվը հասավ 15 հազարի, կամ աճեց 48 տոկոսով[14]։

Երկար ընդմիջումից հետո 1954 թ. նորից բացվեցին Համամիութենական և հանրապետական գյուղատնտեսական ցուցահանդեսները։ Համամիութենական ցուցահանդեսին մասնակցեցին հանրապետության մի քանի հազար առաջավոր կոլտնտեսականներ։ 1954—57 թթ. ցուցահանդեսին մասնակցած ավելի քան 7 հազար առաջավորներից 625-ը պարգևատրվեցին ոսկե և արծաթե մեդալներով։

Կոլտնտեսային դաշտերի աշխատավորները հետպատերազմյան հնգամյակների տարիներին իրենց անձնվեր աշխատանքով խոշոր նվաճումների հասան գյուղատնտեսության բոլոր ճյուղերում։ Բարձրացավ հացահատիկի, տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, բարելավվեց այգեգործության վիճակը, իսկ անասնաբուծությունը դուրս եկավ փակուղուց և բռնեց վերելքի ուղին։ Գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, պետությանը բամբակի, շաքարի ճակնդեղի, հացահատիկի, մսի, կաթի, բրդի վաճառքի պլանները կատարելու և գերակատարելու գործում հանրապետության աշխատավորների ձեռք բերած խոշոր հաջողությունների համար Հայկական ՍՍՀ-ն 1958 թ. պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Գյուղատնտեսական արտադրության բարձրացման գործում մեծապես աճել է գիտության դերը։ Նախասովետական Հայաստանում չկար գյուղատնտեսական գիտա-հետազոտական կամ սերմնաբուծական որևէ հիմնարկություն։ Այժմ, միայն գյուղատնտեսության մինիստրության սիստեմի գիտահետազոտական հիմնարկներում աշխատող գիտության թեկնածուների և դոկտորների քանակը անցնում է 300-ից։ Բարձրորակ մասնագետների և արտադրության առաջավորների ջանքերով աճեցվել են գյուղատնտեսական կուլտուրաների մի շարք նոր տեսակներ։ Այգեգործությունն այժմ բարձրացել է լեռնային շրջաններն ու կանաչապատել դարավոր խոպան տարածություններ։ Գիտության նվաճումները լայնորեն օգտագործելու շնորհիվ բարձրացել է տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը։ Ծխախոտի բերքատվությամբ մեր հանրապետությունը գրավում է առաջին տեղերից մեկը, Միության մեջ տալով ամբողջ արտադրության 10—12 տոկոսը։

Տարեցտարի ավելացող կապիտալ ներդրումների և գյուղատնտեսությունը գիտականորեն ղեկավարելու շնորհիվ խոշոր աշխատանքներ են կատարվել գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը ճիշտ տեղաբաշխելու և կոլտնտեսություններն ու սովխոզները առավել շահութաբեր մթերքների արտադրությամբ մասնագիտացնելու ուղղությամբ։ Հանրապետության գյուղատնտեսության մեջ սովետական իշխանության տարիներին ներդրվել է մեկ միլիարդ 221 միլիոն ռուբլի, որից 766 միլիոնը միայն վերջին տասնամյակում։

Այժմ Հայաստանը դարձել է բարձր զարգացած գյուղատնտեսության երկիր։ Արտադրության բարձրացման շնորհիվ փոխվել է հայկական գյուղի դեմքը։ Սոցիալիստական գյուղերն ու ավանները ծածկվել են բարեկարգ, հիմնականում երկհարկանի բնակարաններով, հասարակական ու արտադրական

---

14 Նույն տեղում, էջ 122։

շենքերով, դպրոցների, կուլտուր-լուսավորական և առողջապահական հիմնարկների խիտ ցանցով։ Զևավորվել է գյուղական մտավորականությունը։ Դա սովետական կարգերի մեծագույն նվաճումներից մեկն է։

Այսպիսով, անցած հիսուն տարիների ընթացքում վիթխարի տեղաշարժեր են կատարվել կոլտնտեսային գյուղում։ Սովետական իշխանության կողմից վարած ագրարային քաղաքականությունը, որը հենվում է սոցիալիստական տնտեսության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների վրա, զարգացման նոր հորիզոններ է բացում կոլտնտեսությունների և սովխոզների համար՝ տարեցտարի ամրապնդելով նրանց նյութատեխնիկական բազան և արմատավորելով գիտության ու առաջավոր փորձի նվաճումները։ Սովետական Հայաստանի գյուղում աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պայքարելով սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի համար և ձեռք բերելով նորանոր նվաճումներ, կարևոր ավանդ են մուծում Կոմունիստական շինարարության մեծ գործում։

ПОДЪЕМ КОЛХОЗНОЙ ДЕРЕВНИ

Г. М. ГЕГАМЯН

Резюме

За годы советской власти значительно преобразовалось сельское хозяйство и сформировалось колхозное крестьянство Армении. Благодаря проведению земельной реформы, развитию оросительной системы, внедрению завоевании науки и передового опыта и т. д. колхозное крестьянство Советской Армении добилось крупных успехов во всех областях сельскохозяйственного производства. В результате социальных и экономических изменений повысился материальный и культурный уровень тружеников села, неузнаваемо изменился облик деревни.